ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 19/12

Քաղ. Երեւան 26 հոկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. հոկտեմբերի 26-ի նիստում (արձանագրություն N 7.2) քննարկեց Դը Ջիլլեթ Քամփընի ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից 2012թ. Օգոստոսի 15-ին ներկայացված «ORANGE BURST» (հայտի համարը 20111022) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 1-ն կետի «բ» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 87-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը (շփոթելու աստիճան նմանությունը): Տվյալ դեպքում հայտարկված «ORANGE BURST» ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող «Orange Bloom» ապրանքային նշանին: Վերոնշյալ ապրանքային նշաններում տրամաբանական շեշտադրումն ընկնում է «ORANGE» տարբերակող բառի վրա:

Բողոքարկողը, հիմք ընդունելով «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» ՀՀ Կարգի 108-րդ կետը, բողոքին կից ներկայացրել է համաձայնագիր՝ Հենկել ԱԳ ընդ Քո. ԿԳաԱ (Henkel AG & Co. KgaA, Henkelstraβe 67, 40589 Düsseldorf) ընկերությունից, որը հանդիսանում է միջազգային գրանցում Ա0. 728869 «Orange Bloosom» ապրանքային նշանի սեփականատերը, և որում նշված է, որ իրենք տալիս են իրենց համաձայնությունը Դը Ջիլեթ Քամփընի (The Gillette Company, One Gillette Park, 02127 Boston, Massachsetts, USA) ընկերությանը՝ հայտ N 20111022 «ORANGE BURST» ապրանքային նշանի

գրանցման և օգտագործման համար Հայաստանում՝ 03-րդ դասի հետևյալ հայտարկված ապրանքների համար՝ «Օդեկոլոն և անուշաբույր ջուր»:

Բողոքարկողը խնդրում է վերանայել N20111022 «ORANGE BURST» ապրանքային նշանի վերաբերյալ կայացված գրանցումը մերժելու մասին որոշումը և այն գրանցել Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարկված ապրանքների համար:

Կոլեգիայի անդամը՝ բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. օգոստոսի 15-ին «Դը Ջիլլեթ Քամփընի» ընկերության կողմից ներկայացվել է 03-րդ դասի ապրանքների համար (հայտի համարը N 20111022) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության դեմ բողոք: Համառոտ ներկայացվեց ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին հիմքերը, ինչպես նաև բողոքի համառոտ բովանդակությունը:

Նշվեց նաև, որ բողոքին կից ներկայացված է նամակ համաձայնագիր Հենկել ԱԳ ընդ Քո. ԿԳաԱ ընկերությունից, որը հանդիսանում է միջազգային գրանցում N 728869 «Orange Bloosom» ապրանքային նշանի սեփականատերը, որում նշված է, որ ընկերությունը տալիս է իր համաձայնությունը Դը Ջիլեթ Քամփընի (The Gillette Company, One Gillette Park, 02127 Boston, Massachsetts, USA) ընկերությանը՝ հայտ N 20111022 «ORANGE BURST» ապրանքային նշանի գրանցման և օգտագործման համար Հայաստանում՝ 03-րդ դասի հետևյալ հայտարկված ապրանքների համար՝ «Օդեկոլոն և անուշաբույր ջուր»:

Նշվեց նաև, որ հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, ապրանքային նշանը կարելի է գրանցել:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը ամբողջությամբ բավարարել, ապրանքային նշանի նախնական մերժման մասին Գործակալության 07.02.2012թ. և կրկնական փորձաքննության՝ 10.05.2012թ. որոշումները չեղյալ ճանաչել և գրանցել Դը Ջիլեթ Քամփընի ընկերության «ORANGE BURST» (հայտի համարը 20111022) բառային ապրանքային նշանը 03-րդ դասի հայտարկված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա. Ազիզյան